Հասցեատեր՝

«Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcararatarmenia.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17.05.2024թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Դավիթ Բակլաչյան
	Արփի Լազարյան
	Նարեկ Ադամյան
	Հենրիկ Խաչատրյան

Վարույթ՝	ԳԽ-019
Խախտում՝	1. «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի (124)՝ ոչ սպորտային վարքագիծ ցուցաբերելը, պարգևատրման արարողությանը չներկայանալը (Հոդված 9, 2-րդ կետի 1.2 ենթակետ, Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 39, 4-րդ կետ, Հավելված 1 Ա, 74-րդ կետ), 2. «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Արթուր Մկրտչյանի (123)՝ ոչ սպորտային վարքագիծ ցուցաբերելը, պարգևատրման արարողությանը չներկայանալը (Հոդված 9, 2-րդ կետի 1.2 ենթակետ, Հավելված 1 Ա, 31-րդ կետ, Հոդված 39, 4-րդ կետ, Հավելված 1 Ա, 74-րդ կետ), 3. Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում թիմի երկրպագուների կողմից տարբեր տեսակի հրավառ նյութեր կիրառելը (Հավելված 1 Ա, 25-րդ կետ)
Առաջնություն՝	Հայաստանի Գավաթի Խաղարկություն
Խաղ՝	«Արարատ-Արմենիա» - «Ուրարտու», 12.05.2024թ.

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Հաշվի առնելով «Արարատ-Արմենիա» թիմի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի (124) կողմից ընթացիկ մրցաշրջանում կարգապահական խախտման բազմակիությունը՝ վերջինիս զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 4 (չորս) խաղով: Որակազրկումը տարածվում է 2024 թվականի

մայիսի 17-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների վրա։ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի վեցհարյուրապատիկի՝ 600,000 ՀՀ դրամի չափով

2. «Արարատ-Արմենիա» թիմի մարզիչ Արթուր Մկրտչյանին (123) զրկել ծառայողական պարտականությունները կատարելու իրավունքից 3 (երեք) խաղով։ Որակազրկումը տարածվում է 2024 թվականի մայիսի 17-ից սկսած ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների վրա։ «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի՝ 400,000 ՀՀ դրամի չափով։
3. Խաղի ժամանակահատվածում մարզադաշտում թիմի երկրպագուների կողմից տարբեր տեսակի հրավառ նյութեր կիրառելու համար «Արարատ-Արմենիա ՖԱ» ԲԲԸ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հազարերկուհարյուրապատիկի՝ 1,200,000 ՀՀ դրամի չափով։

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100,000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: